ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 10 14.11.2012թ.

«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջներով և «Պետական կառավարչական հիմնարկների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Արարատի մարզի Զանգակատուն համայնքի ղեկավարի աշխատակազմ» բյուջետային հիմնարկը վերակազմակերպել որպես «Արարատի մարզի Զանգակատան գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:
2. Հաստատել «Արարատի մարզի Զանգակատան գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը:
3. Առաջարկել Զանգակատուն համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու «Արարատի մարզի Զանգակատան գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի պետական գրանցման գործողությունը:

Ավագանու անդամներ

1. _____ (ստորագրություն) Արտակ Մարգարյան
2. _____ (ստորագրություն) Արմեն Թադևոսյան
3. _____ (ստորագրություն) Ավետիք Մայիլյան
4. _____ (ստորագրություն) Բաբիկ Թևոսյան
5. _____ (ստորագրություն) Հրահատ Գրիգորյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ (ստորագրություն) Է.ՍԱՀԱԿՅԱՆ